Ապառաժ

Հիմնադրված է 1991 թվականին: 13 (376) 17-31 հուլիս, 2015թ.

ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀՅ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Խմբագրական

Վերադարձ անցյալին այլեւս անհնար է

Վերջին շրջանում ադրբեջանա-ղարաբաղյան սահմանային իրավիճակը գնալով լարվում է: Լարվածության հրահրողն, ինչպես միշտ, Ադրբեջանն է, որը սահմանի ողջ երկայնքով չի դադարում տարբեր տեսակի եւ տրամաչափի զենքեր կիրառել՝ հաշվի չառնելով անգամ ԵԱՀԿ մինսկի խմբի կամ էլ ԵԽ նախագահի՝ տարածաշրջան այցելությունները: Ավելին, նրանց այցերի ժամանակ լարվածությունն ավելի աճեց, քանզի նրանց կողմից Բաքվում արված հայտարարությունները ոգեւորիչ դարձան ալիեւյան իշխանությունների համար:

ԵԽ նախագահ Դոնալդ Տուսկի հայտարարությունն այն մասին, որ ԵՄ-ն հարգում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը եւ չի ճանաչում ԼՂ-ի անկախությունը, ոչ միայն ցույց տվեց միջազգային կառույցի կողմից ագրեսորին ցինիկորեն սատարելու տրամադրությունը, այլեւ ապացուցեց, որ ոչ մի միջազգային կառույց ի զորու չէ լուծելու այս հակամարտությունը, քանի շարունակում է հավասարության նշան դնել կողմերի միջեւ՝ նման վերաբերմունքով հող նախապատրաստելով Ադրբեջանի կողմից սահմանային իրավիճակի լարվածությանը:

Ադրբեջանա-ղարաբաղյան հակամարտության կարգավորման շուրջ ընթացող բանակցային գործընթացում «մադրիդյան հայտնի սկզբունքների» հռչակումից այս կողմ երբեք այսքան հաճախակի մեզ չեն հիշեցրել «օկուպացված տարածքների» մասին:

Մեզ մատուցված եւ մեր ականջներին հարմարեցվող տարբերակներից «ամենահամարձակը» ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Ուորլիքի վերջին հայտնի հայտարարություններն են հենց Երեւանից՝ այսպես կոչված «օկուպացված տարածքների վերադարձման» վերաբերյալ:

Ուորլիքի նման հայտարարությունը եւ ընդհանրապես «օկուպացված տարածքներ» եզրույթը, որը շրջանառվում է բանակցային գործընթացում, խոսում է բանակցային գործընթացի մաս կազմող հայկական դիվանագիտական շրջանակի՝ հայկական շահերը ոչ լիարժեքորեն ներկայացնելու մասին:

Եթե ՀՀ նախագահը ժամանակին անվարան հայտարարել է, թե Աղդամը հայկական տարածք չէ, ապա զարմանալի չէ, որ այսօր, որպես դրա շարունակություն, Ուորլիքի կամ մեկ ուրիշի բերանից հնչում են «օկուպացված տարածքներ», «հարակից տարածքներ» եւ նման այլ վտանգավոր եզրույթներ:

Եթե միջազգային որեւէ կառույց չի խոսում Ադրբեջանի կողմից օկուպացված հյուսիսային եւ արեւելյան Արցախի տարածքների մասին, ապա մեզ մոտ՝ հայկական արտաքին քաղաքականություն իրականացնող, ինչպես նաեւ համապատասխան դիվանագիտական մարմիններում եւ գրասենյակներում, նույնպե՞ս մոռացել են դրա մասին...

Եթե հայկական դիվանագիտությունն այսքան տարտամ չլիներ, ապա ստիպված չէինք լինի ամեն անգամ լսել ինչ-որ միջազգային կառույցի կամ անձի ոչ հայանպաստ հռետորաբանությունները:

Այս ամենով հանդերձ՝ Արցախը, ինչպես նախկինում, այս անգամ եւս մեկ պատասխան ունի՝ վերադարձ անցյալին այլեւս անհնար է...

Ադրբեջանական-ղարաբաղյան սահմանի լարվածությամբ Ադրբեջանը մի քանի հեռահար խնդիրներ է լուծում

ԼՂՀ ԱԺ փոխնախագահ, ՀՅԴ Արցախի Կենտրոնական կոմիտեի անդամ Վահրամ Բալայանի կարծիքով՝ նկատելի է այն հանգամանքը, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների ներկայացուցիչների՝ տարածաշրջան այցից առաջ սահմանային լարվածությունն աճում է:

«Ե՛վ Ուորլիքի, ե՛ւ Լավրովի հայտարարություններն ինչ-որ չափով նպաստում են սահմանային լարվածությանը, սակայն չեմ կարծում, որ դա վճռորոշ է: Թե՛ Ադրրբեջանի իշխանությունները, թե՛ մտածող հասարակությունը լավ գիտեն, որ Ղարաբաղի հարցը վաղուց լուծված է»,- ասում է Վահրամ Բալայանը:

Վահրամ Բալայանի կարծիքով՝ ոչ միայն այս ամիսներին է նկատելի դարձել սահմանային ակտիվությունը, այլեւ՝ ընդհանրապես վերջին շրջանում դա նկատելի է: Ադրբեջանա-ղարաբաղյան սահմանի լարվածությամբ Ադրբեջանը մի քանի հեռահար խնդիրներ է լուծում:

«Նախ եւ առաջ, Ադրբեջանը ցանկանում է միջազգային հանրությանը ցույց տալ, որ չի հաշտվում իր ունեցած կորուստի հետ՝ ամեն կերպ փորձելով հետ վերադարձնել, ինչպես ինքն է ներկայացնում, «իր տարածքները»,- նշում է Վ.Բալայանը:

Նրա խոսքերով՝ Ադրբեջանի իշխանությունները նաեւ ձգտում են ճնշում գործադրել թե՛ ԼՂՀ, թե՛ ՀՀ քաղաքացիների վրա՝ փորձելով ցույց տալ, որ պատերազմն ավարտված չէ, մշտական վտանգը կա, եւ ժողովրդի մեջ վախի մթնոլորտ ձեւավորել: Սակայն այստեղ՝ Արցախում, ամեն մեկն ապրում է իր կյանքով՝ վստահ լինելով, որ սահմանը անխոցելի է:

ԱԺ փոխնախագահի կարծիքով՝ Ադրբեջանը նաեւ նպատակ ունի խոչընդոտելու ԼՂՀ տնտեսական զարգացմանը:

«Հասկանալի է, որ առանց ներդրումների՝ տնտեսության զարգացումն անհնար է: Նույնիսկ Արցախում բնակվող, նյութական հնարավորություն ունեցող մարդիկ երբեմն վարանում են մեծ տնտեսական ներդրումներ անել. դեռ չեմ խոսում օտարերկրյա ներդրողների մասին»:

ԼՂՀ ԱԺ փոխնախագահը համոզված է, որ այս իրավիճակը ձեռնտու է Ադրբեջանին նաեւ իր ներքին քաղաքական նկատառումներով: Ալիեւի ղեկավարությունը ժողովրդին անընդհատ պատերազմական վիճակում պահելով եւ խոստանալով Ղարաբաղի վերադարձը՝ անընդհատ ճնշումների է ենթարկում այնտեղ ձեւավորվող քաղաքացիական հասարակությանը՝ ավելի ամրապնդելով իր մենիշխանությունը:

ԱՄՆ պետդեպի պաշտոնյաները խոստացել են օգնել սիրիահայերին

Ամերիկայի Միացյալ Նահանգները կարեւորում է Սիրիայի հայ համայնքի պաշտպանության խնդիրը եւ հավատարիմ է դրա իրականացմանը: Հայ դատի գրասենյակի հաղորդմամբ՝ ԱՄՆ-ի հայկական մի շարք կազմակերպությունների ներկայացուցիչների հետ Վաշինգտոնում...

Կարդացեք 2-րդ էջում

ՏԻՄ ընտրությունները՝ սեպտեմբերի 13-ին

Հուլիսի 20-ին կայացել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հերթական նիստը, որը վարում էր հանձնաժողովի նախագահ Սրբուհի Արզումանյանը:

Կարդացեք 3-րդ էջում

ԱՄՆ Հայ Դատի հանձնախումբը շարունակում է աշխատանքները Հայաստանին եւ Արցախին հատկացվող օգնության մեծացման համար

ԱՄՆ Հայ Դատի հանձնախումբը շարունակելու է աշխատանքները Հայաստանին եւ Լեռնային Ղարաբաղին հատկացվող ԱՄՆ արտաքին օգնության մեծացման ուղղությամբ: «Արմենպրես»-ի հետ զրույցում այս մասին նշել է ԱՄՆ Հայ Դատի հանձնախմբի մամուլի հետ կապերի պատասխանատու Էլիզաբեթ Չուլջյանը:

«Հայ Դատի գրասենյակը շարունակելու է ճնշումներ գործադրել, որպեսզի շարունակվի Հայաստանին եւ Լեռնային Ղարաբաղին հատկացվող ԱՄՆ արտաքին օգնությունը: Կոչ է արվում ֆինանսական օժանդակություն հատկացնել նաեւ Հայաստան գաղթած եւ այդտեղ հաստատված սիրիահայերին՝ նրանց վերաբնակեցման համար»,- ասել է Չուլջյանը:

Հուլիսի 10-ին ԱՄՆ Սենատի հատկացումների ենթահանձնաժողովը, քննարկելով Հայաստանին եւ Լեռնային Ղարաբաղին հատկացվող ԱՄՆ արտաքին օգնության հարցը, առաջարկել էր 2016 թվականի ֆինանսական տարում ընդլայնել Լեռնային Ղարաբաղին հատկացվող օգնությունը հակամարտության հետեւանքով տուժած անձանց օգնելու եւ առաջացած կարիքները հոգալու համար: Հայաստանի

մասով առաջարկվել էր հատկացնել 20 մլն 60 հազար դոլարի տնտեսական օգնություն եւ 1 մլն 700 հազար դոլարի ռազմական օգնություն, ինչպես նաեւ 600 հազար դոլար Միջազգային ռազմական կրթության եւ ուսուցման ծրագրի համար: Հայաստանի համար առաջարկված 20 մլն 60 հազար դոլարի օգնությունը 10 տոկոսով ավելի է նախագահ Բարաք Օբամայի առաջարկած օգնությունից:

Ներկայացուցիչների պալատի հատկացումների ենթահանձնաժողովը, քննելով արտաքին օգնության հարցը, լռելյայն համաձայնություն էր հայտնել հայկական հատկացումների վերաբերյալ:

Չուլջյանի խոսքով՝ առաջին անգամ չէ, որ ԱՄՆ Կոնգրեսի պալատներից մեկը լռություն է պահպանում հայկական հատկացումների մասով: «Հաջորդ քայլը պետք է լինի այն, որ յուրաքանչյուր հանձնաժողովի ներկայացրած բանաձեւը քննարկվի երկու պալատների լիագումար նիստում, իսկ տարբերությունները պետք է հարթվեն: Սովորաբար գերադասվում է այն պալատի առաջարկը, որը հստակ դիրքորոշում ունի հարցի շուրջ: Մյուս տարբերակն այն է, որ բանաձեւերից ոչ մեկը չի քննարկվի, այլ կընդունվի ընդհանուր մեկ միասնական փաստաթուղթ»,- բացատրեց նա՝ տեղեկացնելով, որ վերջնական որոշումը պետք է կայացված լինի մինչեւ հոկտեմբեր:

yerkir.am

ԱՄՆ պետդեպի պաշտոնյաները խոստացել են օգնել սիրիահայերին

Ամերիկայի Միացյալ Նահանգները կարեւորում է Սիրիայի հայ համայնքի պաշտպանության խնդիրը եւ հավատարիմ է դրա իրականացմանը: Հայ դատի գրասենյակի հաղորդմամբ՝ ԱՄՆ-ի հայկական մի շարք կազմակերպությունների ներկայացուցիչների հետ Վաշինգտոնում կայացած հանդիպմանը այս մասին հայտնել են Միացյալ Նահանգների պետքարտուղարության պաշտոնյաները: Հանդիպման մասնակից՝ Վաշինգտոնի Հայ դատի գրասենյակի ղեկավար Արամ Համբարյանն «Ամերիկայի ձայնին» պատմել է, որ հանդիպումը հնարավորություն է տվել ԱՄՆ-ի պաշտոնյաներին՝ հասցնել Միացյալ Նահանգների հայ համայնքի մտահոգությունները. «Այդ լուրջ հանդիպումը մեզ հնարավորություն տվեց անկեղծ եւ բաց կարծիքներ փոխանակել եւ սիրիահայերի մարտահրավերների դեմն առնելու իրական լուծումներ մշակել»:

Հանդիպման մեկ այլ մասնակից, ՀՅԴ Արեւմտյան Ամերիկայի ատենապետ,

դոկտոր Վիգեն Հովսեփյանի խոսքով՝ գոյություն ունի լուրջ հակասություն ԱՄՆ-ի կողմից Սիրիայի փախստականներին տրամադրվող օգնության չափերի եւ սիրիահայերին այդ օգնության ընդամենը չնչին մասի բաժին հասնելու հետ կապված. «Մենք կարողացանք խոսել եւ հրավիրել ներկայացուցիչների ուշադրությունը մեր սիրիահայ քույրերին եւ եղբայրներին անմիջական օժանդակություն հասցնելու կարեւորության վրա՝ անկախ նրանից, թե որտեղ են նրանք ապրում»:

Հանդիպման մասնակիցների հավաստմամբ՝ Միացյալ Նահանգների դիվանագետները կոչ են արել համայնքի ներկայացուցիչներին՝ պաշտոնապես ներկայացնել իրենց առաջարկները, որոնց միջոցով ԱՄՆ-ի կառավարությունն իր աջակցությունը կցուցաբերի սիրիահայ փախստականներին եւ Սիրիայի հայ համայնքին:

ԱՄՆ-ի հայկական մի շարք կազմակերպությունների ներկայացուցիչներ ուշադրություն են հրավիրել մի շարք լուրջ խնդիրների վրա, որոնք կապված են օգնությունը հասցեատիրոջը հասցնելու հետ, ինչի արդյունքում Հալեպի եւ Սիրիայի այլ վայրերի հայերին չի հասել ամերիկյան օգնությունը:

«ԱՊԱՌԱԺ»

Պետո Դեմիրճյանն անդրադարձել է Բելգիայի Ներկայացուցիչների պալատի կողմից ցեղասպանության ճանաչմանը

«Առաջին լրատվական»-ը զրուցել է Բրյուսելի ՀՅԴ Հայ դատի գրասենյակի պատասխանատու Պետո Դեմիրճյանի հետ՝ կապված Բելգիայի Ներկայացուցիչների պալատի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձեւի ընդունման հետ:

- Պարոն Դեմիրճյան, Բելգիայի ներկայացուցիչների պալատը հուլիսի 23-ի լիագումար նիստին բացարձակ մեծամասնությամբ Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձեւ է ընդունել: Ինչպե՞ս եք գնահատում այս հանգամանքը, եւ ինչո՞ւ դա արվեց հիմա:

- Ինչպես արդեն ծանոթ եք, 1998 թվականին Բելգիայի Սենատը արդեն բանաձեւով ճանաչել էր Հայոց ցեղասպանությունը: Բելգիան զույգ խորհրդարաններով կառավարվող պետություն է: Սենատը, որ 1998 թվականին ընդունել էր Ցեղասպանությունը, բավականին մեծ աշխատանք էր տարել, որ Բելգիան լինի այն երկրների շարքում, որը ոչ միայն ընդունում, այլ քրեականացնում է ցեղասպանությունների ժխտումը: Դուք գիտեք, թե որքան շատ թուրք կա Բելգիայում: Հատկապես այս տարի՝ 100-ամյակին, երբ Եվրախորհրդարանը բանաձեւ որդեգրեց, խթան հանդիսացավ, որ եվրոպական այլ երկրներ եւս ընդունեն Ցեղասպանությունը: Պետք է կարեւորել այն փաստը նաեւ, որ ազգությամբ թուրք պատգամավորները ապրիլի 24-ին մերժեցին հոտնկայս հարգել Ցեղասպանության զոհերի հիշատակը: Այս ճանաչումը շատ մեծ կարեւորություն կունենա, որ Ցեղասպանության ժխտումը քրեականացվի այլ երկրներում եւս: Այսպիսով, Բելգիան իր զույգ խորհրդարաններով եւ, առավել եւս, կառավարության կազմով ընդունում է Հայոց ցեղասպանության հանգամանքը, կոչ է անում Թուրքիային ճանաչել Հայոց ցեղասպանությունը, առերեսվել իր անցյալի հետ ու դադարեցնել ժխտողական քաղաքականությունը, որը պետք է առաջ տանի Հայաստանի եւ Թուրքիայի հաշտեցումը:

- Ձեր կարծիքով՝ այս որոշումը պայմանավորված է միայն Բելգիայի եւ Հայաստանի բարեկամությա՞մբ, թե՞ այդ երկիրն իր ուրույն խնդիրներն է լուծում Թուրքիայի հետ:

- Պետք չէ այդպիսի ձեւակերպում անել: Եթե Բելգիան առաջ տաներ միայն իր ուրույն շահերը, ապա նման բանաձեւ չպետք է ընդուներ, որովհետեւ Բելգիայում շատ թուրքեր կան: Առավել եւս, չպետք է ասել, որ Բելգիան Հայաստանի հետ լավ հարաբերություններով է պայմանավորում Ցեղասպանության ընդունումը: Պետք է ընդունել, որ եվրոպական երկրներում, հատկապես Բելգիայում, ցեղասպանության արարքը եւ փաստը մարդկային արժեքներին դեմ է, եւ Բելգիան սա է, որ առաջ է քաշում՝ մի կողմ դնելով եւ՛ հայկական, եւ՛ թուրքական գործոնը: Բանաձեւի մեջ նշվում է, որ սա Թուրքիայի դեմ չէ ուղղված, այլ ժխտողականության: Ասվում է, որ սա պետք է լինի դուռ Հայաստանի եւ Թուրքիայի հաշտեցման համար, նշվում է եւ՛ հույների, եւ՛ ասորիների, վերջին շրջանում Հյուսիսային Իրաքի կողմից իրականացված եզդիների ցեղասպանությունները: Այս բանաձեւը պետք է համալիր նայել, ոչ թե երկկողմանի հարաբերություններով: Կոչ էր, որ մենք աշխարհն ուզում ենք տեսնել առանց ցեղասպանությունների: Պետք է քննարկվի նաեւ Բելգիայի խորհրդարանում ցեղասպանությունների հիշատակման կամ քննադատման օր ունենալը:

- Պարոն Դեմիրճյան, այս ճանաչումները մեզ ի՞նչ են տալիս: Արդյո՞ք Հայաստանն ու Թուրքիան սրանով մոտենում են իրար, թե՞ հակառակը՝ Թուրքիան ավելի ագրեսիվ է դառնում: Գործնականում՝ մենք ի՞նչ եք ստանում այս ճանաչումներից:

- Այս ճանաչումները, բնականաբար, մեզ օգնում են: Պետք է անպայման հիշել, որ Թուրքիան Եվրոպական միության թեկնածու երկրներից է, եւ ԵՄ ընտանիքի անդամ դառնալու հետ պայման է, որ Թուրքիան առերեսվի իր անցյալի հետ: Տարեկան ամեն զեկույցում ԵՄ-ն հիշատակում է Թուրքիայի կողմից Ցեղասպանությունը չճանաչելու հանգամանքը: Ինչո՞ւ է կարեւոր արտաքին աշխարհի՝ հատկապես ճնշումը Թուրքիայի դեմ, որովհետեւ Եվրախորհրդարանում իր բանաձեւի քննարկման ժամանակ՝ ապրիլի 15-ին, գերմանացի պատգամավորները նշեցին, որ եթե Գերմանիան 45 թվականին դրսից ճնշման չենթարկվեր, երբեք չէր հաշտվի իր անցյալի հետ (ակնարկում էին հրեաների Ցեղասպանությունը): Հենց այս դեպքում էլ պետք է լինի՝ ինչպես Գերմանիայի պարագայում: Եվ այս ճանաչումները մեծապես օգնելու են Թուրքիայի ներսի այն առաջադիմական շրջանակներին, կուսակցություններին, որոնք Թուրքիայի մեջ պայքարում են Հայոց ցեղասպանության ճանաչման համար:

arfd.am

ՏԻՄ ընտրությունները՝ սեպտեմբերի 13-ին

Հուլիսի 20-ին կայացել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հերթական նիստը, որը վարում էր հանձնաժողովի նախագահ Սրբուհի Արզումանյանը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջին համապատասխան՝ նիստում քննարկվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի 2015 թվականի մայիսի 3-ին կայացած ընտրությունների կազմակերպման եւ անցկացման, ընտրական օրենսգրքի խախտումների վերլուծության եւ առաջարկությունների վերաբերյալ ԼՂՀ ԿԸՀ հաղորդագրությամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովում հանդես գալու մասին հարցը, եւ այն իրականացնելու իրավունքը վերապահվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Սրբուհի Արզումանյանին:

ԼՂՀ տեղական ինքնակառավարման մարմինների հերթական եւ արտահերթ ընտրություններ նշանակելու եւ անցկացնելու մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումների հիման վրա՝

նիստում քննարկվել եւ հաստատվել են 207 համայնքներում 2015 թվականի սեպտեմբերի 13-ին սպասվող ընտրությունների կազմակերպման ու անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցերը:

Համաձայն տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների հիմնական միջոցառումների ժամանակացույցի՝ թեկնածուների ինքնաառաջադրման կամ կուսակցությունների կողմից գրանցման փաստաթղթերը համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացնելու ժամկետ է սահմանվել 2015 թվականի օգոստոսի 9-ից մինչեւ օգոստոսի 14-ի ժամը 18.00-ն, թեկնածուների գրանցումը կկատարվի օգոստոսի 14-ից մինչեւ օգոստոսի 19-ի ժամը 18.00-ն: Նախընտրական քարոզչության ժամանակահատվածն է օգոստոսի 20-ից մինչեւ սեպտեմբերի 11-ի ժամը 24.00-ն:

ԿԸՀ-ն հաստատել է նաեւ 2015 թվականի սեպտեմբերի 13-ի ընտրությունների նախապատրաստման եւ անցկացման հետ կապված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական հանձնաժողովների ծախսերի նախահաշիվները՝ 81 941 200 (ութսունմեկ միլիոն ինը հարյուր քառասունմեկ հազար երկու հարյուր) ՀՀ դրամի չափով ընդհանուր գումարով:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նիստում քննարկվել է նաեւ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի մի շարք որոշումներում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին հարցը:

Ա.Ն

Համազգային հայ կրթական եւ մշակութային միությունը հանդիպում է ունեցել ԼՂՀ ԱԺ փոխնախագահի հետ

Համազգային հայ կրթական եւ մշակութային միության 10 երկրներից թվով 35 երիտասարդներ հուլիսի 22-ին այցելել են Արցախում: Հուլիսի 23-ին նրանք այցելել են ԼՂՀ ԱԺ եւ հանդիպում ունեցել Ազգային ժողովի փոխնախագահ, «Դաշնակցություն» խմբակցության պատգամավոր Վահրամ Բալայանի հետ:

Վ. Բալայանը երիտասարդներին ծանոթացրել է Արցախի տնտեսական ու քաղաքական զարգացումներին, առկա խնդիրներին ու հեռանկարներին՝ կարեւորելով Սփյուռքի հայության ներուժն Արցախում կենտրոնացնելու հանգամանքը:

Երիտասարդները հարցեր են ուղղել ԱԺ փոխնախագահին ու հետաքրքրվել Արցախի խնդիրներով, սահմանում տիրող իրավիճակով, Արցախի՝ արտաքին հարբերություններում ունեցած հաջողություններով, այդ ուղղությամբ տարվող աշխատանքներով:

Վ.Բալայանը կարեւորել է նման այցելությունների կազմակերպումն Արցախում եւ անդրադարձել Արցախ-Սփյուռք

համագործակցության, հայրենադարձության, հայրենիքում ներդրումներ կատարելու անհրաժեշտության ու Սփյուռքի հետ ամուր կապի հաստատման հարցերին:

Հանդիպմանը ներկա էր նաեւ ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության պատգամավոր Լեռնիկ Հովհաննիսյանը:

Համազգային հայ կրթական եւ մշակութային միությունը հիմնվել է 1928 թվականի մայիսի 28-ին Կահիրեում՝ Հայ կրթական եւ հրատարակչական համազգային ընկերություն անունով: Հիմնադիր անդամներն էին Հ. Օհանջանյանը, Լեւոն Շանթը, Նիկոլ Աղբալյանը, Գասպար Իփեկյանը, Ստեփան Եսայանը եւ ուրիշներ: Ձգտելով սփյուռքահայության մշակութային կյանքի աշխուժացմանը՝ ընկերությունը տարբեր գաղթավայրերում հիմնել է հայ մշակույթի եւ կրթության բազմաթիվ կենտրոններ: Մինչեւ 1947 թվականը միության կենտրոնական վարչությունը գտնվել է Կահիրեում: Ներկայումս եգիպտահայ համայնքում հայապահպան գործունեություն է իրականացնում Համազգայինի Կահիրեի մասնաճյուղը: Միությունը վայելում է ՀՅ Դաշնակցություն կուսակցության հովանավորությունը:

«ԱՊԱՌԱԺ»

Ադրբեջանը հանդիսանում է ամենաավտորիտար ռեժիմներից մեկը. Freedom House

Իրավապաշտպան Freedom House միջազգային կազմակերպությունն աշխարհում ազատությունների վիճակի մասին հրապարակած իր տարեկան զեկույցում նշել է, որ նախկին ԽՍՀՄ հանրապետությունների մեջ Ադրբեջանը հանդիսանում է ամենաավտորիտար ռեժիմներից մեկը՝ Թուրքմենստանից եւ Ուզբեկստանից հետո:

Կազմակերպությունն ընդգծել է, որ Ադրբեջանում ռեժիմի խստացումն սկսվել է 1993 թվականին, Հեյդար Ալիեւի իշխանության գալուց հետո, իսկ 2003 թվականին իշխանությունն Իլհամ Ալիեւին փոխանցվելուց հետո այդ երկրում բռնաճնշումները կտրուկ սաստկացել են:

«Ադրբեջանում ղեկավարում է ավտորիտար ռեժիմը, որը բնութագրվում է այլակարծության նկատմամբ անհանդուրժողականությամբ եւ քաղաքացիական ազատությունների ու քաղաքական իրավունքների նկատմամբ քամահրանքով», - ասվում է զեկույցում:

Նշվում է, որ իշխանությունները փորձում են երկիրը ներկայացնել՝ որպես մուսուլմանական մեծամասնությամբ «ժամանակակից աշխարհիկ պետություն, որը վտանգավոր տարածաշրջանում հանդիսանում է կայունության կղզյակ»:

«Պետությունը ռեպրեսիվ օրենսդրությունն ու դատական համակարգն օգտագործում է, որպեսզի ենթարկի եւ պատժի քննադատությունը, ամբողջական վերահսկողության տակ վերցնի ՁԼՄ-ներին եւ ապահովի պաշտոնական քարոզչության գերիշխանությունը:

Կառավարությունը վերացրել է մյուս բոլոր քաղաքական ուժերին եւ ընդդիմադիր կուսակցություններին՝ ազատ թողնելով հրապարակը իշխող «Ենի Ազերբայջան» կուսակցության համար: Կայունության պաշտպանության պատրվակով իշխանությունների բռնաճնշումների հերթական ալիքն սկսվել է 2009 թվականին՝ հասնելով գագաթնակետին 2014 թվականին:

Մեկ տարվա ընթացքում իրավապաշտպանները, լրագրողները եւ վարչակարգի մյուս քննադատները ենթարկվել են քրեական մեղադրանքների, ֆիզիկական եւ ֆինանսական հետապնդումների: Բազմաթիվ հասարակական կազմակերպություններ եւ նրանց բանկային հաշիվները սառեցվել են, շատերը ստիպված են եղել փակվել կամ հեռանալ Ադրբեջանից:

Երիտասարդական կազմակերպությունները եւ նրանց հետ կապված բլոգերները դարձել են իշխանությունների հարձակումների գլխավոր օբյեկտներ:

Ադրբեջանի ռազմավարական մի քանի դաշնակիցներ անհանգստություն են հայտնել քաղաքացիական հասարակության վրա ճնշման ուժեղանալու կապակցությամբ, սակայն, վարչակարգը վճռականորեն մերժում է մարդու իրավունքների խախտումների համար ցանկացած քննադատություն:

2014 թվականի վերջին նախագահ Ալիեւի աշխատակազմը հրապարակորեն ԱՄՆ-ին մեղադրել է կառավարությանը տապալելու նպատակով ՀԿ-ների հետ դավադրության մեջ,- ասվում է զեկույցում:

Այդ բազմաէջ փաստաթղթում տրվում է վերլուծությունն այն բանի, թե ինչպես է վերջին 10 տարիներին փոխվել իրավիճակն Ադրբեջանում՝ ընտրական գործընթացի, քաղաքացիական հասարակության, անկախ ՁԼՄ-ների, ազգային-ժողովրդավարական կառավարման, տեղական ինքնակառավարման, դատական համակարգի անկախության, կոռուպցիայի, ժողովրդավարության վիճակի տեսանկյուններով:

Freedom House-ը նշում է, որ այդ բոլոր ուղղություններով լուրջ վատացում է գրանցվել Ադրբեջանում:

Սեփ. ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Նրա բացառիկ հավաքածուն հանգրվանեց Արցախում





Լիբանանահայ արվեստագետ, հավաքորդ, ժամանակին Բեյրութի հնագիտական եւ դրամագիտական միության ատենապետ, դասախոս, գեղանկարիչ, քանդակագործ Հարություն Թորոսյանն իր 40 տարվա ընթացքում հավաքած դրամների բացառիկ հավաքածուն նվիրաբերել է Արցախի պատմաերկրագիտական թանգարանին:

Հարություն Թորոսյանը ծնվել է Լիբանանում: Ինչպես պատմում է՝ հայրն արմատներով Արեւմտյան Հայաստանից էր: Մեծ եղեռնի ժամանակ գերդաստանի 169 հոգուց միայն հայրն է ողջ մնացել:

Հարություն Թորոսյանը 1956 թվականին Փարիզում սովորել է Ազգային բարձրագույն գեղարվեստի դպրոցում, 1960 թվականին՝ Ժյուլենի ակադեմիայում: Ստեղծել է դիմանկարներ, նատյուրմորտներ, բնանկարներ, կրոնական թեմաներով նկարներ, ինչպես նաեւ լիբանանյան կյանքը պատկերող կտավներ: Աշխարհի տարբեր երկրներում հանդես է եկել ինչպես խմբակային, այնպես էլ՝ անհատական ցուցահանդեսներով:

Գաղափարը եւ սերը դեպի դրամների հավաքածուն ծնվել է 1971թ., երբ նա կնոջ հետ Փարիզից ժամանել էր Հայաստան եւ հյուրընկալվել Հայաստանի երրորդ հանրապետության վարչապետ Վազգեն Մանուկյանի տանը:

«Վազգեն Մանուկյանի տանը ես տեսա կիլիկյան դրամներ եւ սիրտս միանգամից կպավ: Մտածեցի՝ ինչո՞ւ ես էլ չունենամ այդ դրամներից,- պատմում է Հարությունը,- Հայաստանից մեկնելով՝ սկսեցի փնտրել դրամներ. տատբեր երկրներ էի գնում, լինում էր, որ դրամների տերերն էին աշխարհի տարբեր տեղերից դրամները բերում եւ վաճառում ինձ: Խենթի պես մասնակցում էի աճուրդների եւ շատ գումարներ ծախսում դրամներ ձեռք բերելու համար»:

Հարություն Թորոսյանի խոսքերով՝ շատ անգամ խաբվել է դրամներ հավաքելիս շատ հաճախ նրան կեղծ դրամներ են վաճառել:

«Ես այնքան եմ խաբվել, որ ժամանակի ընթացում դրամների վարպետ եմ դարձել»,- ծիծաղով պատմում է հավաքորդը:

Հարություն Թորոսյանը եղել է Բեյրութի Հնագիտական եւ դրամագիտական միության ատենապետ, եւ նրա պատմելով՝ այդ պաշտոնն էլ օգնեց դրամների հավաքածուի ձեռքբերման գործում:

Հարությունն իր հավաքածուից 60 դրամներ նվիրաբերել է Երեւանի պատմաերկրագիտական թանգարանին: Արցախի պատմաերկրագիտական թանգարանին օրեր առաջ հավաքորդը նվիրաբերել է 168 դրամներ, որոնցից 10-ը թղթադրամներ են, եւ պատմության երեք շրջաններ են ներկայացնում: Այդ դրամները հայոց թագավորների դրամներն են, ինչպես նաեւ Հայաստանի Առաջին Հանրապետության թղթադրամներ: Կան նաեւ նմուշներ, որոնք հազվագյուտ են, օրինակ՝ Հեթումի եւ Լեւոնի պատկերներով դրամները:

Հարությունի խոսքերով՝ Ստեփանակերտի թանգարանին նվիրաբերված հավաքածուն ներառում է ամենաընտիր դրամները՝ բոլորն էլ լավ վիճակում պահված:

«Արցախյան պատերազմում զոհվել են 7000 հայ մարտիկներ, որոնց արյան գնով այսօր ունենք Արցախի Հանրապետություն: Մենք՝ սփյուռքահայերս, ամեն կերպ պետք է փորձենք օժանդակել Արցախին եւ նրա զարգացման գործում մեր լուման բերել,- ասում է Հարությունը եւ շարունակում,- ես մտածում էի, թե ինչպե՞ս կարող եմ իմ նպաստը բերել հայրենիքիս ու ազգիս համար, եւ եկա այն համոզմունքին, որ հավաքածուս, որը 40 տարվա քրտնաջան աշխատանքիս արդյունքն է, որը հավաքել եմ եւ աչքիս լույսի պես պահել, կարող է հենց իմ փոքրիկ նվերը դառնալ Արցախին»:

Պատասխանելով հարցին, թե արդյո՞ք ընտանիքը համաձայնեց նրա որոշման հետ, Հարություն Թովմասյանը պատասխանեց.

«Իմ ընտանիքը լինովին ընդունեց որոշումս: Նրանք ինձ ասացին՝ այդ դրամները պատկանում են մեր ազգին ու պետք է հայրենիքում հանգրվանեն,- ասում է նա եւ ավելացնում,- հավաքածուն եւս մի միջոց է ցույց տալու եւ ապացուցելու, որ մենք հինավուրց ազգ ենք, եւ այն անհեթեթությունները, որոնք Թուրքիան հորինել է աշխարհի համար՝ փորձելով Արեւմտյան Հայաստանն իբրեւ պատմականորեն իրեն պատկանող տարածք ներկայացնել, ժխտելու եւ փաստելու միջոց է... Այս դրամների նվիրաբերումն իմ կյանքի ամենաճիշտ քայլն եմ համարում»:

Հարություն Թորոսյանն ունի 3 զավակ՝ 1 դուստր եւ 2 որդի:

Որդիներից մեկը հորից ժառանգել է սերը դեպի արվեստ եւ դարձել նկարիչ: Դուստրը՝ Ֆրանսիայի «Կարմիր խաչ» կազմակերպության ներկայացուցիչն է:

Հարություն Թորոսյանը, խոսելով հայրենադարձության մասին, ասում է.

«Ես շատ անգամ եմ եկել Հայաստան՝ ամեն անգամ այն մտքով, որ պիտի տեղափոխվեմ վերջնական, բայց մենք լավ հայեր չենք, մենք չենք կարողանում կողմնորոշվել,- ասում է կես լուրջ, կես կատակ,- մենք՝ սփյուռքահայերս, պետք է հստակ որոշում կայացնենք եւ տեղափոխվենք Հայաստան, մեր նպաստը բերենք հայրենիքի զարգացմանը: Երիտասարդ սերունդն ինձ հպարտություն է ներշնչում, որովհետեւ նրանք մեզ նման չեն, նրանք ավելի լավն են, նրանք ինքնուրույն են եւ կազմակերպված: Կարծում եմ՝ նրանք կիրականացնեն մեր նպատակը, կլրացնեն մեր սերնդի բացերը եւ կկերտեն ավելի հզոր հայրենիք...»:

Լուսինե ԹԵՎՈՍՅԱՆ

Տունը քարը քարի վրա դնելով է կառուցվում

Այս տարի Արեւմտյան Ամերիկայի ՀՅԴ կառույցների երիտասարդական թեւը մայրաքաղաք Ստեփանակերտում եւ Ասկերանի շրջանի Աստղաշեն համայնքում կազմակերպել է պատանեկան ճամբարներ: «Ապառաժ» թերթի հյուրն էր Աստղաշենում կայացած ճամբարի ընդհանուր պատասխանատու Սերոբ Աբրահամյանը:

Սերոբն արդեն կատարել է ամենակարեւոր քայլը. նա 2013 թվականին Լոս Անջելեսից տեղափոխվել եւ բնակություն է հաստատել Մայր Հայաստանում:

Ինչպես նա է պատմում՝ մայրն արմատներով Երուսաղեմից է, հայրը՝ Բեյրութից: 70-80-ական թվականներին նրանք տեղափոխվել են ԱՄՆ:

Սերոբն ԱՄՆ-ում ավարտել է քաղաքագիտության բաժնի բակալավրիատը եւ այս տարի ընդունվել Հայաստանի ամերիկյան համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը:

2013թ. Սերոբը մասնակցել է «Դեպի Հայք» ծրագրին եւ մի քանի ամսով մնացել Հայաստանում:

«Ծրագրին մասնակցել եմ այն նպատակով, որ հասկանամ՝ արդյոք կարո՞ղ եմ եւ ուզո՞ւմ եմ հայրենիքումս ապրել,- ասում է Սերոբը,- 2,5 ամիս ծրագրին մասնակցելով՝ գտա հարցիս պատասխանը՝ այո, ուզում եմ եւ պետք է Հայաստանում ապրեմ: Այս հողի հետ կապը իմ երակներում է, իմ էության մեջ. ուրիշ տեղ այլեւս անկարող եմ ապրել: Այստեղ ինձ երջանիկ եմ զգում, եւ այդ երջանկությունը բացատրել չեմ կարող...»:

Հայաստան տեղափոխվելուց մի քանի ամիս հետո Սերոբին աշխատանք են առաջարկել Գորիսում եւ նա տեղափոխվել է: Աշխատում է բջջային հեռախոսների ծրագրերի մշակման ֆիրմայում: Գորիս տեղափոխվելու մասին ասում է. «Գիտակցում էի, որ ինձ համար դժվար է լինելու: Ապրում էի աշխարհի ամենամեծ քաղաքներից մեկում եւ միանգամից տեղափոխվեցի Գորիս: Գիտեի, որ Գորիսը համարվում է Հայաստանի 3-րդ ամենամեծ քաղաքը: Իհարկե, այդ փաստը շատ բան չէր խոստանում, բայց երբ հաստատվեցի՝ հասկացա, որ ինձ համար հաճելի եւ հետաքրքիր է աշխատել 21000 բնակչություն ունեցող՝ հայրենիքիս այդ փոքրիկ անկյունում: Ես շատ լավ ընկերներ եմ ձեռք բերել Գորիսում, ովքեր ինձ համար դարձել են կարեւոր մարդիկ»:

Պատանեկան ճամբարին մասնակցելու համար Սերոբը 2 ամիս շուտ հրաժարվեց գործից, որպեսզի ժամանի Արցախ եւ ամառն արցախցի փոքրիկների հետ անցկացնի:

Պատանեկան ճամբարների կազմակերպման ամենակարեւոր բանը համարում է արցախցի պատանիների այն զգացումը, որ սփյուռքահայությունը պատրաստ է ոչ միայն օգնել, այլեւ ընկերանալ պատանիների հետ: «Ծրագիրն առաջին հերթին մեզ՝ սփյուռքահայ երիտասարդներիս է շատ ոգեւորում, որովհետեւ հնարավորություն է տալիս մեզ հայրենասիրություն եւ ազգային ոգի ստանալ հայրենիքում»:

Սերոբը դժվարությամբ նշում է որոշ խնդիրների մասին:

«Սփյուռքահայ երիտասարդները, ընդամենը 6 շաբաթ ճամբարի մասնակցելով, չեն կարող լիարժեք տեսնել իրական Հայաստանը. չեն կարող եւ չեն էլ ուզում տեսնել իրական Հայաստանը: Նրանք ապրում են իրենց հայրենիքի երեւակայական պատկերով: Իսկ իրական Հայաստանը լոկ հեքիաթային երկիր չէ. այն շատ ու շատ խնդիրներ ու մտահոգություններ ունի: Ես չեմ ընդունում այն մարդկանց, ովքեր՝ չբերելով իրենց լուման հայրենիքի համար, պահանջում կամ գանգատվում ու բողոքում են միայն: Նրանք չեն հասկանում, որ տունը քարը քարի վրա դնելով է կառուցվում, շենանում, եւ պետք է վատը շտկել: Ես չեմ ասում, որ սփյուռքահայերն իրենց հնարավորություններից վեր գումարներ տրամադրեն հայրենիքի շենացմանը, բայց կարելի է եւ պետք է մեր բոլորի ուժը, կարողությունները, գիտելիքները, փորձը ներդնել մեր երկրի համար,- ասում է ու շարունակում,- գու՞ցե մի քիչ ծայրահեղական թվամ, բայց այն մարդիկ, ովքեր գանգատվում են եւ ոչ մի բան չեն անում երկրում առկա սխալները սխալը շտկելու համար, ինձ համար հավասար են դավաճանների...»:

«Ուզում եմ, որ սփյուռքահայությունն ամուր կապ ունենա Հայաստանի հետ: Սփյուռքահայը չպետք է որպես զբոսաշրջիկ այցելի հայրենիք: Սփյուռքահայությունը պետք է իր մասնակցությունն ունենա Հայաստանի կյանքի թե քաղաքական եւ թե սոցիալական հարցերում,- ասում է նա,- մենք պետք է ուժեղ եւ միասնական լինենք հանուն մեր վաղվա օրվա»:

«ԱՊԱՌԱԺ»

Եւս մեկ նվիրական անուն՝ Աբրիկ Արզումանյան



«Երբեմն վախենում էի, որ ընտանիքիս ազերիները եւ ռուս օմոնականները կվնասեն: Անքուն գիշերներ էի անցկացնում միայնակ, 3 փոքրիկի հետ ամուսնուս սպասելով, բայց երբեք հուսահատությունը չի հաղթել հոգուս եւ հաղթանակի նկատմամբ հավատս չի կորել, քանի որ գիտեի՝ դրա իրավունքը չունեմ. պետք է թիկունք լինեմ Աբրիկին»:

Սա Մարտունու Աբրիկի՝ Աբրիկ Արզումանյանի այրի տիկին Զոյայի խոսքերն են, ով չնայած բազում դժվարությունների եւ փորձությունների՝ երբեք չի ընկճվել՝ միայնակ ու պատվով դաստիարակելով իր 3 զավակներին:

Ասում են՝ հաջողակ եւ ուժեղ տղամարդու թիկունքում ուժեղ կամքի տեր կին է կանգնած լինում: Նման առաքինի շատ կանայք հաճախ ստիպված են լինում տղամարդու հետ եւ նրանից հետո կրելու կյանքի բոլոր փորձություններն ու ապտակները:

Արցախյան ազատագրական շարժման հիմքերում կանգնած դաշնակցական հրամանատար Աբրիկ Արզումանյանի մասին շատերը գիտեն:

Աբրիկ Արզումանյանն ու տիկին Զոյան գրեթե հասակակիցներ են: Ապրում էին Մարտունի քաղաքի միեւնույն թաղամասում: Ինչպես տիկին Զոյան է ասում՝

չնայած իրար մոտ էին ապրում, իրար չէին ճանաչում: Առաջին հանդիպումը եղավ 1981-ին, տիկին Զոյայի հորաքրոջ տանը:

«Մինչեւ հիմա հիշում եմ այդ օրը: Հորաքրոջս որդու ընկերները հավաքվել էին իրենց տանը ճաշկերույթի: Ո՞վ էր մտածում, որ սեղանի շուրջ նստած տղաները մի քանի տարի անց պետք է դառնային Շարժման ակտիվիստներ: Նրանցից շատերն էլ պիտի անմահանան ...»,- ասում է նա:

Առաջին հանդիպումից մի քանի ամիս անց զույգն ամուսնացավ: 1982 թվականի նոյեմբերի 28-ն էր: Շուտով ունեցան առաջնեկին՝ Արմինեին:

Նախքան առաջին որդու ծնվելը՝ տիկին Զոյան պատմում է, որ պետք է ընտանիքով Ռոստով քաղաք տեղափոխվեին, որովհետեւ Աբրիկն աշխատանքի հրավեր էր ստացել:

«Ռոստովում լավ վարձատրվող աշխատանքի հրավեր ստացավ, սակայն մեկ պայման կար. պետք էր, որ Կոմունիստական կուսակցության անդամ լիներ: Ինձ համար անսպասելիորեն որոշեց, որ չի մտնում կուսակցության շարքեր եւ չենք մեկնում: Ավելի ուշ հասկացա, որ Շարժման ընդհատակյա փուլը սկսվել էր, եւ չմեկնելու պատճառը դա է»:

Կնոջ խոսքորով ամուսինը ընկերների հետ օրերով տուն չէր գալիս. թաքուն ստորագրություններ էին հավաքում: Սկսեցին խմբավորումներ, ջոկատներ ստեղծել: Տղաները իրենց աշխատավարձով, ամենավերջին կոպեկներով զենք էին գնում ռուսական բանակի զինվորներից:

Այդ շրջանում Աբրիկը մի քանի անգամ Երեւան է մեկնում Կասյան Լեւոնի, Միրզա Վալյոյի հետ եւ զենք են փոխադրում Ղարաբաղ:

«Այլեւս տունը փող չէր բերում: Տղաներն իրենց աշխատավարձն ամբողջությամբ տալիս էին զենք գնելու: Մի անգամ դուստրս մանկական խանութում հարսի հագուստով տիկնիկ տեսավ, որը 10 ռուբլի արժեր: Տուն եկավ եւ տիկնիկ գնելու համար հորից գումար ուզեց, Աբրիկը չիմացավ ինչ պատասխանի: Ես էլ՝ իմանալով, որ մոտը դրամ չկա, ամբողջությամբ իր աշխատավարձը տվել է զենք ձեռք բերելու համար, հանեցի տան խնայողությունից 10 ռուբլի եւ ասացի՝ Արմինեին տուր, թող չիմանա, որ ձեռքիդ փող չկա...»:

Այդ շրջանում արդեն սկսվել էին հետապնդումները Աբրիկի եւ մյուս տղաների հանդեպ:

«Մի օր խոհանոցում թխվածքաբլիթ էի պատրաստում, երբ պատուհանից այն կողմ ձայներ լսեցի: Գլուխս բարձրացրի, տեսա զինված եւ դեմքը ծածկված օմոնականը ճիշտ դիմացս կանգնած՝ հետեւում է տան անցուդարձին: Վախից գոռացի: Ամուսինս Աշանի հրամանատար Արմեն Ավագյանի հետ հյուրասենյակում զրուցում էր: Ձայնիս վրա դուրս վազեցին, ուզում էին բռնել, սակայն օմոնականը հասցրեց փախչել: Դա կյանքիս ամենասարսափելի օրն էր: Այդ օրը մեծ վախ ապրեցի»:

Պատմում է, որ մի քանի անգամ զինված օմոնականները եկան տունը ստուգելու. զենք էին փնտրում: Երկու երեխաներին տեղավորեց լվացքի մեքենայի մեջ, իսկ փոքրիկին գրկեց, մյուս թեւի տակ էլ նռնակ դրեց, որ հանկարծ մի բան լինի՝ պայթեցնի իրեն ու երեխային: Լավ է իմ ձեռքով, քան թուրքի՝ մտածում էր:

1991 թվականի փետրվար ամիսն էր, եւ Աբրիկի ու Զոյայի երրորդ զավակը շուտով պետք է ծնվեր: Ծննդաբերության հետ խնդրներ ունենալու պատճառով նրան տեղափոխեցին Երեւանի Մարգարյան ինստիտուտի մոր եւ մանկան կենտրոն: Աբրիկը նրան հիվանդանոց հասցրեց եւ մինչեւ հիվանդանոցից դուրս գրելը՝ չայցելեց ծննդատուն: Ժամանակ չկար:

Ավելի ուշ տիկին Զոյան իմացավ, որ այդ օրերի ընթացում 3 անգամ ուղղաթիռով զենք է տեղափոխել Ղարաբաղ:

«Հրազդանի հաստոցաշինական գործարանում գիշեր-ցերեկ զենք էին պատրաստում, նա էլ ընկերների հետ տեղափոխում էր Ղարաբաղ: Հիվանդանոցից դուրս գրվելու օրը եկավ: Շատ վիրավորված էի նրանից, բայց կարողացա թաքցնել վիրավորանքս»:

Տիկին Զոյան պատմում է, որ Աբրիկը հետը նռնակներ եւ ինքնաձիգ բերեց հիվանդանոց՝ ասելով, որ պետք է տեղափոխի Ղարաբաղ:

«Ինքնաձիգը ծալվում էր, տեղավորեցի երեխայի բարուրի մեջ, իսկ նռնակները ձեռքիս պայուսակում տեղավորեցի: Վախենում էի, որ կնկատեն, քանի որ երեխան 7 ամսական էր ծնվել, շատ փոքր էր, եթե հանկարծ երեխային մեկ ուրիշը գրկեր, կհասկանար, որ բարուրի մեջ զենք կա: Աբրիկն ասաց՝ Զոյա, մի՝ վախեցիր, տղաները քեզ կդիմավորեն, չեն թողնի, որ բան պատահի:

Երբ Ղարաբաղ հասա, օդանավակայանի ռուս եւ ադրբեջանցի ստուգողներն ասացին, որ պետք է ստուգեն մեր իրերը եւ բացեն երեխայի բարուրը: Սկսեցի գոռալ ոստիկանների վրա, ասացի՝ ի՞նչ կարող է լինել երեխայի բարուրի մեջ: Այս ձմեռվա կեսին ինչու՞ պետք է բարուրը բացեմ: Ձայնս լսելով՝ ռուս աշխատակիցներից մեկը մոտեցավ, ասաց, որ իրեն տամ երեխային եւ հետեւեմ իրեն: Երբ գրկեց երեխային, զգաց, որ բարուրի մեջ բան կա, սակայն ոչինչ չասաց. մի պահ աչքերիս մեջ նայեց, ապա թե. «Ձեռքս բռնեք, որ չսայթաքեք»: Ցյուն էր գալիս: Դրսում արդեն տղաները սպասում էին մեզ: Այդ պահին զգացում ունեցա, որ երեխաս առանց հայր պետք է մեծանա...:

Հոկտեմբեր ամիսն էր: Օմոնականները Կովալյովի գլխավորությամբ ամրացել էին Խոջեվանդում եւ պետք է սկսեին հայաթափել Մարտունին ու հարակից գյուղերը: ՀՅԴ ղեկավարությունն առաջադրանք տվեց՝ չեզոքացնել խմբավորումը՝ կասեցնելու համար հայաթափման գործընթացը:

Աբրիկն ինքը գնաց այդ գործողությանը՝ ասելով, որ իրավունք չունի տղաների կյանքը վտանգելու: «Ասում էր՝ եթե բան լինի, թող առաջինը ինձ լինի, տղաներիս՝ զինվորներիս բան չլինի...»,- պատմում է տիկին Զոյան:

Օմոնականները կրակահերթ էին բացել՝ սպանելով 15 ամյա մի տղայի եւ այգում աշխատող մի մարդու: Նրանք հետեւեցին մեքենային. այն շրջվեց Խոնաշեն գետը: Կովալյովն ու զինվորները մահացան:

Տղաները հորդորում էին, որ նա չմոտենա մեքենային, սակայն Աբրիկը հակառակվեց՝ ասելով, որ մեքենայի մեջ զենք կա եւ տղաների անունների ցուցակներն այնտեղ է. պետք է անհապաղ վերցնի:

Երբ Աբրիկը մոտեցավ մեքենան ստուգելու՝ նրա հետեւից կրակեցին: Փամփուշտը մահաբեր էր... 1991 թվական հոկտեմբերի 3-ն էր...

Դրանով, դժբախտաբար, փորձանքները չվերջացան:

1992 թվականի ապրիլ ամիսն էր: Ազերիները Մարտունին ռմբակոծում էին:

Զոյան դուրս եկավ պատշգամբ, տեսավ, որ արկերն իրենց թաղամասում են թափվում: Արագ տուն մտավ, որ երեխաներին ապահով տեղ հասցնի: Չհասցրեց: Արկը ուղիղ իրենց տան վրա պայթեց:

Որդին՝ Արսենը, ձեռքի վնասվածք ստացավ, միայն վիրահատությունից հետո վերականգնվեց ձեռքի աշխատանքը: Աղջիկը՝ Արմինեն, գլխուղեղի վնասվածք ստացավ. շարժողական կենտրոնը վնասված էր, չէր կարողանում շարժվել: 3 ամիս անգիտակից վիճակում Երեւանի հիվանդանոցներում մնաց, որից հետո ՀՅԴ եւ Արցախկոմիտեի ջանքերով տեղափոխեցին Լիբանան: Այստեղ Մարի Քերոբյանի եւ նրա ընտանիքի շնորհիվ Արմինեն բուժում ստացավ: Մեկ ամիս Լիբանանում մնաց, այնուհետեւ Մարի Քերոբյանի ջանքերով նրան տեղափոխեցին Կանադա, ուր ամբողջությամբ ապաքինվեց:

Ամուսնու մահից հետո մինչեւ 2010 թ. Զոյա Արզումանյանը ծառայում էր հայոց բանակում՝ միաժամանակ իր վրա վերցնելով տան թե տղամարդու, թե կնոջ պարտականությունները:

Այսօր նա 6 թոռ ունի, իսկ ավագ որդու՝ Արսենի տղան հպարտությամբ կրում է պապիկի անունը:

Արմինե ՆԱՐԻՆՅԱՆ

Հայ ոգու Գողգոթան՝ Լիզբոն

Եվ նորից պիտի թերթենք Հայոց պատմության քառհատորյակի դյուցազներգության բաժինը... Այս ընտիր բաժնի այն գլուխը, որն իրենց արյունով գրեցին մեր նահատակ սրբերը, մեր ռազմի ճերմակափայլ տաճարի ադամանդափայլ քրմերը...

1983 թվականի հուլիսի 27-ի առավոտյան, մեր անթաղ մեռելների ու մոխրացած ոսկորների խոր շառաչը քամին տնքալով հասցրեց Պորտուգալիայի մայրաքաղաք Լիսաբոն, ուր արդեն ուխտին հավատարիմ, հայոց ազատագրության բագինին իրենց զոհաբերության ժամին էին սպասում նրանք... Ովքե՞ր էին նրանք... Որտեղի՞ց էին եկել... Այս պարզ ու հասարակ հարցադրման մեջ պատասխանը հասկանալու համար պարտադիր է եւ հարկ է, որ թերթենք հայոց պատմության խունացած նալու համար պարտադիր է եւ հարկ է, որ թերթենք հայոց պատմության խունացած էջերն ու այնտեղ գտնելով՝ կարդանք:

Սեդրակ, Սիմոն, Սարգիս, Արա, Վաչե... Այդ նրանք էին, որ անտեսելով ամեն ինչ՝ երդվեցին հավատարիմ մնալ... Երդվեցին... Եթե հարկ լինի... Հրամայական դարձած «հարկ լինին» միավորվեց... Բռունցքվեց ու պայթեց, փշրվեց օդում՝ իր հետ փշրելով աշխարհի լռությունը... Այդ օրը Տեր Զորի անապատներից մեր անթաղ մեռելների խուլ տառապանքներից հյուսված տխուր նվագը պիտի փոխակերպվեր մարտաշունչ հաղթերգի: Այդ օրը Լիսաբոնի երկնակամարը պիտի ներկվեր հեղափոխական կարմիրով ու կամաց-կամաց վերածվեր ամպագոլ թրթիռի՝ թողնելով հավատարմության ուխտի դաշինք ծիածանը... Այդ օրը պիտի գար, ու եկավ՝ լրացնելու, ամբողջացնելու հայոց պատմության ռազմաշունչ մատյանի փառահեղ էջերը... Այդ օրը հայ մարդը նորից պիտի հավատար իր ռազմի աստծո պաշտամունքին ու նվիրեր իր համար այնքա՜ն թանկը... Զոհաբերության այս աննախադեպ դրվագը հեղաշրջեց իր սեփական ուժի ու կարողության հանդեպ անվստահություն ձեռք բերած ժողովրդին... Խռովքի չափ ալեկոծեց հոգիները:Որտեղի՞ց եկան այս տղաները... Ո՞վ վառեց նրանց ներսում անթեղված կրակը... Ո՞վ եւ ե՞րբ հայտնաբերեց այս փայլուն հոգիները... Որտեղի՞ց եկան այս տղաները... Փորփրեցի հիշողությանս մատյանն ու հասկացա... Բոցաշունչ արյան ժառանգություն ստացած, ազգային-գաղափարական դաստիարակության ճամփով եկան այս հեղափոխական 5-ը... Եկան, որ կիսատն ավարտեն... Եկան, որ շարունակողը լինեն, եկան, որ ոգու դաստիարակություն ներարկեն իրենցից հետոներին... Հայոց պատմության աստվածաշունչ մատյանի այս գլուխը պիտի լավ սերտենք, ուշադիր ու վստահ... Թերթենք ու գտնենք մեր հեղափոխական ժամանակների հերոսների հարություն առած կերպարները... Լավ սերտենք այս դասը՝ Լիզբոնի դասը, Սիմոնի ու Արայի իմաստավորված կյանքը, Սաքոյի լեցուն հավատքը, Վաչեի կամքն ու Սեդրակի՝ հերոսին վայել խոնարհումը: Նրանց փարումը ազատության խորանին մի նոր դաս էր՝ զանգի նման էր, կոչի պես... Նրանց զոհաբերումը գաղափարի տաճարին աղոթքի նման էր, խունկ ծխելու պես... Ովքե՞ր էին այս տղաները, որտեղի՞ց եկան: Ինչու՞ չկարողացանք նրանց մեր մեջ պահել: Ի՞նչը խանգարեց մեզ՝ նրանց մեր մեջ ունենալու: Ախր դա այնքա՜ն հեշտ էր, այնքա՜ն կարեւոր... Հետագայում մեզանից հետոներին փոխանցելու համար: Ինչու՞ պիտի Արայի Հեղինե մայրիկը ափսոսանք ապրեր, որ առանց գիտենալու հերոս է մեծացրել, եւ ցավում է, որ ուրիշ զավակներ չի ունեցել՝ ուրիշ անգամ էլ զոհաբերելու, նվիրաբերելու համար հայիս ազատության բագինին: Ինչու՞ պիտի Սիմոնի Մարալ քույրը եղբոր ֆիզիկական կորստի այդ անբուժելի ցավի մեջ հոգեկան բարձր բավականություն գտներ՝ մխիթարվելու համար նրա վեհ արարքով... Ինչու՞ պիտի վարպետ Օննիկը իր որդուն ամեն անգամ հիշելուց ասեր. «Առօրյա իր կյանքի մեջ հանդարտ, բայց ազգային ու, հատկապես, Հայ Դատի հետ կապված հարցերի մեջ միշտ ջղուտ ու վճռական կեցվածք ուներ Սեթոս...»: Աստված իմ, որքան մեծ է Սաքոյի Մարի մայրիկի սփոփանքը, երբ որդու դագաղին թեքված, բայց հպարտորեն ու վստահությամբ պիտի ասի, թե. «Սաքոս ու իր ընկերները աշխարհին ապացուցեցին, որ հայ ժողովուրդը մշտապես պատնեշի վրա է, եւ որ անձնազոհ մարտիկները երբեք չեն պակասում, եւ որ պիտի չհուսահատվել, որովհետեւ նրանք արթուն են եւ վճռել են շարունակել պայքարը...»: Կամքի ինչպիսի՜ դրսեւորումով է խոսում Վաչեի Նազար հայրը. «...ժամանակին շատ նահատակներ ենք տվել ու պատրաստ ենք ավելին զոհելու՝ մինչեւ որ հասնինք մեր նպատակին...»: Այս տղաների ու նրանց հարազատների արտահայտություններն ընկալելու, նրանց ներաշխարհի մեջ թափանցելու, նրանց գաղափարական ու քաղաքական գիտակցության արմատներին հասնելու, հայտնաբերելու համար բավարար է թերթել նրանց դաստիարակության Սրբազան Մատյանները հանդիսացող մեր հեղափոխական գրականությունը, նաեւ հասկանալու համար, թե որտեղի՞ց եկան այս տղաները: Նիկոլ Դումանների ու Արաբոների ազատատենչ ոգին շնչած այս տղաները ամեն կերպ ջանում էին հեռու մնալ ինքնացուցադրումից ու առօրյա, կենցաղային մանր-մունր անիմաստ աղմուկից: Նրանք գիտակցում էին, որ շառավիղն են Տեր Զորի բյուրավոր նահատակների վերապրած բեկորների: Նրանք գիտակցում էին, որ ոգու եւ գաղափարի մահը նախ մահ է ազգային արժանապատվության, անարգանք՝ գլխատված կամ խաչը բարձրացրած հայ կանանց ու երեխաների անթաղ դիակներին: Ու այս գիտակցումով եկան այս հեղափոխական 5-ը: Եկան փաստելու, որ միայն լացով ու ողբալով հայրենիք չի կառուցվի: Հայ ժողովրդի պատմական ամբողջ ընթացքում առյուծածին մայրերը հերոսներ կերտելու ճանապարհին գաղափարի կաթով սնեցին իրենց զավակներին՝ օրոցքի մեջ «Զարթի՛ր որդյակը» շուրթերին: Ծնեցին, սնեցին ու նվիրաբերեցին աստվածների տաճարին: ...Ահա հերոսը, ժողովրդի ընտրյալը, պատրաստ զոհաբերության, ինքնամատուցման... Հերոսներն այսպես են լինում... Հեռու կյանքի աղմուկից, ինքնամոռացության տալով իրենք իրենց՝ նետվում են ազգային յուրօրինակ տեսակի պահպանման ձեւի դրսեւորման խարույկի մեջ: Նույնացվող նախատիպեր մեր պատմության ընթացքում մշտապես ունեցել ենք եւ դեռ պիտի ունենանք... Թեկուզ եւ հենց Բանկ Օտոմանի օրինակով կամ Շուշիի լեգենդով: Գարեգին Նժդեհը մարդու այս տեսակին բնորոշելիս ասում է. «Մեծ Մեռելները» նրանք են, որոնք իրենց ապրած կյանքով ու թափված արյունով սրբագործում են հայրենի հողը, իմաստավորում են գաղափարը: Իր ընտիր մեռելների պաշտամունքը չունեցող ժողովուրդը ապերախտ ու բարբարոս, անարժան է անկախ հայրենիքի, որը միշտ էլ նահատակների սրբազան աճիւնից կը բարձրանայ: Մի ժողովուրդ բարոյապես այնքան ուժեղ է, որքան ջերմ է նրա պաշտամունքը դէպի իր մեծ մեռելները»: Լիզբոնի մարտիկները իրենց նահատակությամբ միացան մեր «Մեծ Մեռելներին» ու դարձան ներշնչանքի աղբյուր, պայքարի կորով՝ հավատ ու ոգեւորություն ներարկելով հայ երիտասարդության մեջ, փոխակերպվելով դյուցազներգության մեր Սասնա Ծռերի:

«... Յիշածս ու յիշածս անունները կը ներկայացնեն այն սերունդը, որ իր զոհաբերութեամբ, իր յեղափոխական խառնուածքով, իր բարոյական ըմբռնումներով մէկ անգամ միայն ծնաւ մեր կեանքին մէջ եւ երկրորդ անգամ այլեւս աշխարհ չտեսաւ: Անոնցմէ ոմանք միայն յիշեցի, ...բայց ուրիշ ատեն, երբ կարելի լինի, պէտք է տալ անոնց բոլորին նկարագիրը, որովհետեւ անոնցմէ ոմանք հայոց կեանքի մէջ վճռական դեր կատարեցին: Ես շատ սերունդներ տեսայ տարբեր վայրերու մէջ, բայց այդ սերունդին համն ու հոտը տարբեր էր, ինչպէս Արտամետի խնձորինը, թէկուզ մէջը որդ ինկած լինի...» /ՌՈՒԲԵՆ «Հայ յեղափոխականի մը հիշատակարանը»/:

«Լիզբոնի իմ ընկերները» գրքույկի

կազմող հեղինակ՝ Արա ՆԱԽՇԲԱՐՅԱՆ

Նրանք 5-ն էին, բայց նրանց մեջ ողջ հայ ժողովուրդն էր

1983 թվականի հուլիսի 27-ին աշխարհի ուշադրությունը Հայ Դատի վրա սեւեռելու նպատակով, Հայ Հեղափոխական Բանակի հինգ երիտասարդներ՝ Վաչե Տաղլեյանը, Սիմոն Յահլիյանը, Սեդրակ Աճեմյանը, Սարգիս Աբրահամյանը եւ Արա Քրճլեյանը, հարձակվում են Լիսաբոնի թուրքական դեսպանատան վրա՝ նպատակ ունենալով պայթեցնել դեսպանատունը:Նրանք քաջ հասկանում էին, որ գնում են գիտակցված մահվան:

Հարձակման պահին թուրք զինվորի կրակոցից զոհվում է Սիմոն Յահնիյանը, իսկ մյուս չորսին հաջողվում է մտնել դեսպանատան տարածք՝ որտեղ երկու պայթյուն են իրականացնում: Ներկաների հետ պայթեցվում է ողջ դեսպանատունը:

Նրանց քայլը բողոքի ու ցասումի քայլ էր, որ սկիզբ էր առնում հայոց պահանջատիրության ակունքից: Նրանք 5-ն էին, բայց նրանց մեջ ողջ հայ ժողովուրդն էր...

«...Շատ հպարտ եմ, որ հայ ծնած եմ, որովհետեւ հայ պիտի մեռնիմ: Շատ ուրախ եմ իմ գործողությամբ: Հիմա մեր ապրած կեանքը իսկապես որ կեանքե գատ ամեն ինչի կը նմանվի: Կապրինք ուրիշին տիրապետության տակ, ուրիշի խամաճիկներն ենք»:

Սիմոն Եահնեյան

«...Ինչպես որ մեկը կըսե երգը՝ երբ չի մնում ելք ու ճար, խենթերն են գտնում հնար: Այո մենք խենթեր ենք, բայց չակերտյալ խենթեր: Եկեք, միացեք մեզի:Կը հավատամ, որ կտիրանաք մեր հայրենիքին»:

Սարգիս Աբրահամյան

«...Մենք ալ ազգ ենք, հին ազգ ենք, եւ մեր իրավունքն է՝ ուրիշ ազգերու պես ապրիլ մեր հողերուն վրա: Մենք ալ կուզենք տեսնել մեր ժողովուրդը խաղաղ, հանգիստ իր հայրենիքին մեջ եւ մտահոգ միայն իր հայրենիքով, ապագայ հայ սերունդը պատրաստելով»:

Վաչե Տաղլեյան

«...Ես կուզեմ երիտասարդությանն ըսել, թե երբեք թող չտխրին, ինչքան ալ թուրքը զորավոր ըլլայ մեզմե ավելի, նոր զենքով կամ նոր դիվանագիտությամբ: Մենք առաջինները չենք, որ կքալենք: Մեզմե առաջ շատեր քալած են եւ կը յուսամ, որ մեզմե ավելի լավերն ալ պիտի գան, մեզմէ ավելի գործեր պիտի ընեն»:

Սեդրակ Աճեմյան

«...Կուզիմ, որ իմ ընկերներս, որոնք ինծի հետ մեծցած են, նույն միջավայրեն մեջ մեծցած են, նույն տեղերը յաճախած են, նույ նգործերը ըրած են, համոզուին այս մեկ կետեն եւ չըսեն ընտանիքը, կեանքը, ապագան: Առանց հայրենիքի, առանց մեր հողերուն ոչ ապագայ կա, ոչ կեանք կայ, ոչ ընտանիք կըլլայ»:

Արա Քըրճլեան

«ԱՊԱՌԱԺ»

Խանասորի արշավանքը՝ պայքարի ու հաղթանակի խորհրդանիշ

1897 թ. հուլիսի 25-ի Խանասորի արշավանքը հայոց պատմության մեջ մնաց որպես պատմության կարեւոր ու լավագույն մի դրվագ: Այսօր արդեն 119 տարի է անցել Խանասորի արշավանքի պատմական այդ օրից, բայց մինչեւ օրս որպես պատգամ կենդանի է մնացել արշավանքի հրամանատարի՝ Խանասորի Վարդանի խոսքը՝ ուղղված զինվորներին. «Ցույց տանք մեր հասարակության թերահավատ մասին, որ ընդունակ ենք հեղափոխական, թեեւ անհավասար կռիվը հաջողությամբ առաջ տանելու, ցույց տանք ամբողջ աշխարհին, որ հայն էլ գիտե կռվել ազատության համար...»

Արշավանքի նախաձեռնողն ու իրականացնողը Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցությունն էր: Որոշումը ՀՅԴ-ն ընդունեց 1896 թ. աշնանը՝ Թիֆլիսում գումարված Ընդհանուր ժողովի ժամանակ: Որոշումը միաձայն չընդունվեց: Շատ գործիչներ՝ Հովսեփ Արղությանը, Վազգենը, Սարգիս Մեհրաբյանը եւ այլք կարծում էին, որ Բանկ Օտոմանի գործողությունից հետո, երբ մի խումբ ֆիդայիներ գրավեցին օսմանյան բանկը, վտանգավոր է մի վայրում միաժամանակ մեծաքանակ խմբավորմամբ հանդես գալը: Սակայն, ի վերջո, Նիկոլ Դումանի պնդմամբ, որոշումն ընդունվեց:

XIX դարավերջին Արեւմտյան Հայաստանի ազատագրման կենտրոնը դարձավ ՀՅԴ Դուրան-Բարձրավանդակի կոմիտեությունը, որի կենտրոնը Վանն էր: Վանում էին գործում ազգային-հեղափոխական գործիչները, այնտեղ էր կուտակվում Երկրի ապստամբության համար նախապատրաստվող ու պահեստավորվող զենք-զինամթերքը: Դեպի Վան հայ գործիչներն անցնում էին Պարսկահայաստանի տարածքով, իսկ այդ ճանապարհը հսկում էր քրդական մազրիկ ցեղախումբը:

Արյունարբու սուլթան Աբդուլ-Համիդ Երկրորդի ցուցումով քրդերը շարունակ խոչընդոտում էին հայկական զինավառ խմբերի թափանցումը Վան, շարունակական հարձակումներով լարվածություն էին ստեղծում Վասպուրականի հայկական բնակավայրերում: Մազրիկները Աղբակ-Վասպուրականում անպատիժ կեղեքում ու թալանում էին հայությանը եւ միշտ իրենց ավարառության ժամանակ անթաքույց

ստանում էին իշխանությունների աջակցությունը: 1896 թ. մազրիկները, հարձակվելով Վանի ջարդերից հետո Պարսկաստան նահանջող հայ երիտասարդների վրա, իսկական նախճիր սարքեցին... Մազրիկների ավազակային հարձակմանը զոհ գնացին շուրջ 300 անզեն երիտասարդներ՝ դաշնակցական Պետոյի, արմենակյան Ավետիսյանի եւ հնչակյան պարագլուխ Մարտիկի գլխավորությամբ:

Ելնելով ստեղծված իրավիճակից՝ հայ խմբապետերից Նիկոլ Դումանը ՀՅԴ Բյուրոյին առաջարկեց արշավանք կազմակերպել դեպի Խանասոր՝ պատժելու քրդական մազրիկ ցեղախմբին:

Ատրպատականում հավաքվեց դաշնակցական գործիչների ու ֆիդայական շարժման սերուցքը: Այնտեղ էին Նիկոլ Դումանն ու Վարդան Մեհրաբյանը, իշխան Հովսեփ Արղությանն ու Կարոն (Արիստակես Զորյան, Ռոստոմի՝ ՀՅԴ հիմնադրի կրտսեր եղբայրը), Հարություն Շահրիկյանն ու Վազգենը (Տիգրան Տերոյան), Գուրգենը (Բաղդասար Մալյան) եւ Սեւքարեցի Սաքոն, Քրիստափոր Օհանյանն ու Գալուստ Ալոյանը, Փոխիկն ու Ախպերը, դեռեւս նորագիր զինվորական Անդրանիկն ու շատ-շատերը:

Կազմվեց 275 անձից բաղկացած հարվածային ջոկատ, որից 40 հոգին՝ հեծյալ: Ֆիդայիներն իրենց ջոկատը բաժանեցին մի քանի մասի, որոնց հրամանատարներ կարգվեցին Նիկոլ Դումանը, Տաշոն՝ իշխան Հովսեփ Արղությանը եւ այլք: Արշավանքի ընդհանուր հրամանատարն էր Սարգիս Մեհրաբյանը, որ հետայսու պիտի կոչվեր Խանասորի Վարդան:

Մազրիկ ցեղախումբը տեղակայված էր Խանասորի դաշտում: Դա մի մեծ գոգավորություն էր՝ շրջապատված բլուրներով: Հայկական ջոկատները, դուրս գալով Սալմաստից, հատեցին թուրք-պարսկական սահմանը, շրջանցեցին Արաուլ լեռն ու չորս կողմից շրջապատեցին դաշտը:

1897 թ. հուլիսի 25-ի վաղ առավոտյան ֆիդայիները, երգելով Միհրդատ Եսայանի «Կռվեցեք տղերք» երգը, որ նվիրված էր Նիկոլ Դումանի Բողազ Քյասանի կռվին, անակնկալ հարձակվեցին մազրիկ ցեղախմբի վրա:

Հարձակման արդյունքում կոտորվեց քուրդ տղամարդկանց մեծամասնությունը: Շատ քչերին հաջողվեց խույս տալ: Հավատարիմ հայի եւ ֆիդայու պատվին ու արժանապատվությանը՝ հայ ֆիդայիները խնայեցին քրդերի կանանց եւ երեխաներին: Ֆիդայիների ցասումից խույս տվեց նաեւ մազրիկների ցեղապետը՝ Շարաֆ բեյը, որը կանացի հագուստով ծպտյալ դուրս եկավ հայերի շրջափակումից:

Քրդերը Խանասորի արշավանքի հետեւանքով հարյուրավոր զոհեր տվեցին: Փաստորեն, մազրիկ ցեղախումբը դադարեց որպես այդպիսին գոյություն ունենալուց: Հայկական կողմը տվեց 25 զոհ, այդ թվում՝ ՀՅԴ հիմնադիր Ռոստոմի եղբայրը՝ Կարո Զորյանը:

Խանասորի արշավանքի հաջող ավարտը մեծ ոգեւորություն առաջացրեց հայության շրջանում, սրտապնդեց ու երկար ժամանակ հայերի համար Ավարայրի փոխարեն պայքարի ու հաղթանակի խորհրդանիշ դարձավ հենց Խանասորը:

ՀՅԴ ԱԵՄ լրատվական հանձնախումբ

Նիկոլ Դուման՝ երկաթյա կամքով ղարաբաղցի լեռնականը

«Ինչ էլ լինի, թե՛ թշնամուն եւ թե՛ բարեկամին հարգանք ու պատկառանք ներշնչողը, դժբախտաբար, դեռ կոպիտ ուժն է: Եւ մի ազգ, եթե ուզում է մնալ հարգված, եթե չի ուզում կորչել, պետք է լինի զենքի ընդունակ, միշտ պետք է լինի կազմ ու պատրաստ ինքնապաշտպանության համար, մանավանդ՝ քաղաքական ցնցումների վայրկյաններում»:

Հայ ժողովրդին եւ Հայաստանի ամբողջական ազատագրության շարունակվող երթին մղում ու թափ տվող եւ մարտունակություն սովորեցնող այս մեծ պատգամը պատկանում է հայոց ազգային-ազատագրական պայքարի դաշնակցական հայդուկապետին՝ Նիկոլ Դումանին: Նա ծնունդով Արցախի Խաչեն գավառի (Լեռնային Ղարաբաղի Ասկերանի շրջան) Ծաղկաշատ /Ղշլաղ/ գյուղից է: Ն.Դումանը հայոց նորագույն շրջանի պատմության վրա իր անջնջելի դրոշմը դրեց՝ իբրեւ առասպելատիպ Նիկոլ Դուման:

Գերազանցապես դաշնակցական էր Դումանը, ով իր գործով ու նկարագրով ազգային արժեքի վերածեց հայի դաշնակցական կերպարը: Իբրեւ այդպիսին՝ նա միայն Դաշնակցությանը չպատկանեց, այլեւ արժանացավ հայ ժողովրդի բոլոր հատվածների ու հոսանքների անվերապահ գնահատանքին ու պաշտամունքին: Հեղափոխականի իր առաջին քայլերից սկսած՝ հազիվ 24 տարեկան դաշնակցական ուսուցիչ-գործիչ Դումանը դրսեւորեց թե՛ գաղափարական-կազմակերպական, թե՛ մարտական-ռազմական երկաթյա կարգապահություն: Հետագա իր ամբողջ գործունեության ընթացքում սահմանն անցնող ֆիդայական խմբերի կազմակերպումից մինչեւ Վասպուրականում դաշնակցական կազմակերպության ստեղծումը, Խանասորի արշավանքի մտահղացումից մինչեւ 1905-ի հայ-թաթարական ընդհարումների ռազմական ղեկավարումը, Դումանն ամեն քայլափոխի առաջնորդում էր հայ հեղափոխականի պողպատյա կամքն ու երկաթյա կարգապահությունն ամրապնդելու եւ հզորացնելու հետեւողականությամբ:

Միայն Դումանի օրինակով դաշնակցականի նկարագիրը կարելի է բնորոշել: Միայն նման նկարագիր ունեցողը կարող էր՝ Խանասորի արշավանքի ծրագիրը կյանքի կոչելով, ծրագրի իրականացման մեջ հիմնական ներդրում ունենալով հանդերձ՝ համեստորեն ընկերոջը՝ Վարդանին, հանձնել արշավանքի ընդհանուր հրամանատարությունը եւ ինքը բավարարվել հիսնապետի պաշտոնով: Դարձյալ Դումանի օրինակով խոնարհ, ընկերասեր եւ ժողովրդային մարդը կարող է, մտավոր մեծ պաշարի տեր լինելով եւ հայկական ազատամարտի ռազմավարական ուղղության հունավորման ու մշակման մեջ վճռական խոսք ունենալով հանդերձ, կուսակցական պատասխանատու մարմինների անդամակցությունից հեռու մնալ եւ ամբողջ ուժերով նվիրվել հեղափոխական-ռազմական կենդանի գործին:

Որքան դիպուկ է Գաբրիել Լազյանի այն բնութագրումը, թե Նիկոլ Դումանը եղել է հայ ազգային-ազատագրական պայքարի ամենամտավորական ֆիդային, ով հավասարապես ե՛ւ մարտիկ-ֆիդայիների, ե՛ւ մտավորական-քաղաքական գործիչների ակնածանքին արժանացավ: Եթե թոքախտը չհյուծեր նրան եւ Դումանը ինքնասպանությամբ վերջ չտար իր կյանքին, անվարան կարելի է համոզված պնդել, թե Ա. Աշխարհամարտի ամբողջ տեւողության եւ հետո Հայաստանի անկախացման շրջանի պատմակշիռ իրադարձությունների մեջ հայ ժողովուրդն անպայման պիտի օգտվեր Նիկոլ Դուման անունով անմահացած «Ղարաբաղցի լեռնականի պողպատե կամք»-ի հրաշագոր եւ առաջնորդող ներկայությունից: Թեեւ պատմությունը «եթե»-ներով չի շարժվում, բայց անպայման ի վիճակի կարող ենք լինել պատմության անիվը առաջ մղելու, եթե Նիկոլ Դումանի անձի, գործի եւ մանավանդ պատգամի ներշնչումով սերնդեսերունդ ձայն տանք իրար, թե՝ «Ով որ կարծում է, թե ինքնապաշտպանության ապահովումը կարելի է ձեռք բերել՝ միշտ մնալով պաշտպանողական սահմաններում, նա չարաչար սխալվում է: Պաշտպանողական սահմաններում ապահով մնալու համար հարկավոր է, որ հարձակման ենթարկվող կողմն ընդհարման բոլոր կետերում լինի թվով ավելին, քան հակառակորդը, որակով բարձր եւ ունենա ավելի կատարելագործված զենքեր ու առատ ռազմամթերք: Բայց, որովհետեւ բոլոր կետերում անկարելի է ունենալ այդ առավելությունները, ուստի անհրաժեշտ է դառնում որոնել կռվի համար ուրիշ, ավելի նպատակահարմար գործելակերպ...: Պետք է հարձակմանն անպատճառ հատուցել, որպեսզի հարձակվողը չխրախուսվի անպատիժ հաղթությունից եւ չանի նորանոր քայլեր: Այստեղից պարզ երեւում է, որ երկու դեպքում էլ հակահարձակումը դառնում է հրամայական»:

aztagdaily.com

Ժամանակակից բարքեր

Մի գդալ մեղրը

Տատը հարեւան շենքում ապրող թոռնիկներին սովորաբար տեսության էր գնում կիրակի օրերը: Այդ օրը, երբ ներս մտավ, երեխաները դեռեւս սեղանի շուրջը նստած՝ նախաճաշում էին: Նրանք տեղներից ուրախ վեր թռան՝ տատիկին նստելու տեղ տալու համար: Ամենափոքրիկ թոռնիկը՝ չաղլիկ մի տղա երեխա, մոտեցավ ու սկսեց տատի պայուսակը տնտղել՝ միաժամանակ հարցնելով.

- Տատի ջան, ինձ համար ի՞նչ ես բերել, ցույց տուր՝ տեսնեմ:

Տատը թոռնիկներին բաժանեց դեռեւս տաք-տաք համով կարկանդակները: Երեխաները հաճույքով վայելեցին հյուրասիրությունը, իսկ տատը ուտելուց ու թեյից հրաժարվեց՝ հայտնելով, որ նոր է նախաճաշել:

Քաղցր զրուցելուց հետո, երբ տատը վեր կացավ, որ գնա, հարսը սեղանին դրված ափսեի վերջին գդալ մեղրը լցրեց մուրաբայի փոքրիկ պնակը ու մատուցեց սկեսրոջը՝ ասելով:

- Թեյ չխմեցիր, համտես չարեցիր, վերցրու՝ տանը մի բաժակ թեյ կխմես, մայրս էր մի քիչ բերել. երեխաները շատ են սիրում, կերան վերջացրին:

Մի քանի օր անց չաղլիկ թոռնիկը հայտնվեց կողքի շենքում ապրող տատի սենյակում: Տատը գրկեց փոքրիկին, համբուրեց թշիկները, գուրգուրեց «արեւս, անուշիկս, քաղցրիկս» ասելով: Տատի սիրալիր ընդունելիությունից շոյված՝ փոքրիկը՝ սենյակում ինքնագոհ դես ու դեն քայլելուց հետո մոտեցավ, ամանեղենի պահարանը բացեց ու սկսեց ինչ-որ բան փնտրել:

- Ի՞նչ ես ուզում, ափսեները իրար մի խառնիր,- ասաց տատը:

Փոքրիկը լուռ շարունակեց որոնումները:

- Ասա, տեսնեմ՝ ի՞նչ ես ուզում,- նորից հարցրեց տատը:

- Ես մեր փոքրիկ պնակն եմ ուզում, որի մեջ մեր մեղրը բերել ես:

- Այդտեղ չի, արի այս կողմ՝ քեզ տամ,- ասաց տատը եւ ճաշասեղանի մի անկյունում դրված՝ լվացած ափսեների միջից հանեց փոքրիկ ծաղկանախշ պնակը:

Թոռնիկը կիսազարմացած, կիսաբարկացած բացականչեց՝- դատա՞րկ:

Տատն անակնկալի եկած՝ լուռ նայում էր փոքրիկին՝ ջանալով հասկանալ նրան: Այս անգամ արդեն բարկացած, մատնացույց անելով դատարկ պնակը՝ թոռնիկը հարցրեց՝ ու՞ր է մեղրը:

- Չկա,- պատասխանեց տատը:

- Կերե՞լ ես,- լսածին կարծես չհավատալով՝ բորբոքված նորից հարցրեց թոռնիկը:

- Կերել եմ,- ժպտալով հաստատեց տատը:

- Քեզ ո՞վ է ասել մեղրը ուտես,- բարկացած շարունակեց հարցաքննությունը: փոքրիկ «դատավորը»:

- Մայրիկդ է ասել- արդարացավ տատը՝ չհասկանալով, թե ինչի համար է այդ հարց ու փորձը:

- Կերել ես ու ասում էլ ես: Մեղրն ես սիրում դու, տատի, սուտասան ես դու,- մատը տատի վրա թափ տալով՝ կշտամբանքով ասաց չաղլիկ թոռնիկը,- հետո էլ ասում ես, թե ինձ ես սիրում:

- Իսկ ի՞նչ պիտի անեի,- հարցրեց տատը:

- Չե՞ս իմանում. պիտի չուտեիր, պիտի ինձ համար պահեիր: Էլ չխաբես, թե ինձ սիրում ես, չէ, դու մեղր ես սիրում,- հուսահատ եզրափակեց փոքրիկը:

- Աստված վկա՛, քեզ շատ եմ սիրում. Դու իմ քաղցրիկն ես, կյանքս ու արեւս,- իզուր արդարացավ տատը:

Չարացած թոռնիկը մերժեց տատի խոստովանությունը, սեղանի վրա թողնելով ծաղկանախշ դատարկ պնակն ու սիրո մասին իր պատկերացումները՝ խռովահույզ դուրս եկավ՝ «դավաճանության» մեջ մեղադրված տատին թողնելով գլխահակ, տխուր մտածմունքների մեջ...

Ի՞նչ էր ուզում փոքրիկը: Գուցե ա՞յն, որ բարեկամության ու սիրո հարատեւության համար երկուսի միջեւ միշտ պիտի լինի մեկի կողմից մյուսի համար պահած մի «գդալ քաղցրություն», թեեւ բացառված չէ՝ նաեւ «Ինձ ամեն ինչ, քեզ ոչինչ» պահանջ տարբերակը:

Էմմա ՊԵՏՐՈՍՅԱՆ

Էկրանը տեսաղբից մաքրել է պետք

Խոսքը վերաբերում է սերիալներին, որոնցում անխղճորեն աղճատվում, աղավաղվում է մեր մայրենին, երբեմն՝ նույնիսկ զրկվում իր գույնից, էությունից: Ու այս ամենը՝ մեր օրերում, մեր աչքերի առաջ, եւ այն էլ՝ ոչ թե օտարի, այլ յուրայինների, հայ արվեստի պզտիկ ներկայացուցիչների, նորօրյա դերասանների (եթե կարելի է այդպես կոչել) կողմից: Նայեք, խնդրեմ, այնքան հաճախակի ցուցադրվող սերիալները («Բանակում», «Սիրո գերի» եւ այլն) ու կհամոզվեք: Կհամոզվեք, որ արվեստի այդ «գործերում» ոչինչ չկա, բացի գռեհկությունից, դատարկ ու անիմաստ վեճերից, ականջ ծակող շինծու բղավոցներից, դաժանություններից, կենցաղային մանրուքների ֆետիշացումից եւ էլի ուրիշ մտացածին, տգեղ պատկերներից: Գեղագիտական ճաշակի, բարձր ու վսեմ գաղափարների մասին, հասկանալի է, խոսք լինել չի կարող: Չմոռանանք ասել, որ դրանք մատուցվում են ժարգոնով, գողական լեզվով (պատկերացրա, հասկցա, մի հատ հանգստաց, ռադ եղար եւ այլն, եւ այլն):

Այս լեզվով խոսողը կարո՞ղ է օգտակար որեւէ բան տալ կամ ինչ-որ բան ուսուցանել դեռահասին, հասունացող սերնդին, թոշակային տարիքի շեմին կանգնածին:

Սերիալների «դերասանների» մտածելակերպը, պատկերացումներն արվեստի մասին ուրիշ են, «նոր են»: Մի բան, որ այլեւս հանդուրժել չի կարելի:

Բոլոր հիմքերը կան ասելու, պնդելու, որ այդ սերիալները վարկանիշի ցուցիչ են համարում գողական տղերքի «հերոսական» քայլերը, բռնության, վայրագության դրվագները:

Ավելին՝ դրանք աղարտում են մարդկանց սրտերն ու հոգիները եւ նրանց տանում, մեղմ ասած, խոտոր ճանապարհով: Ոմանց կարող է թվալ, թե ես կոչ եմ անում՝ չնայել, չդիտել այդ սերիալները: Ոչ, իհարկե: Դե, ասենք, ես չունեմ էլ այդ իրավունքը: Պարզապես կուզենայի այսպիսի մի խորհուրդ տալ բոլորին. դիտելուց հետո գոնե մեկ-երկու րոպե խորհել, մտորել. «Ի՞նչ սովորեցի, ի՞նչ ուսանելի, նոր բան իմացա, որ կմնա հիշողությանս մեջ»:

Ու, համոզված եմ, այս հարցերը կունենան նույն պատասխանը՝ ո՛չ մի բան:

Այսպես է: Բայց... չթաքցնենք: Չնայած այս ամենին՝ նայողներ էլի կան: Պատանիներ, աղջիկներ, զինծառայողներ, ուսուցիչներ... Այո՛, այո՛, ուսուցիչներ, մատաղ սերնդի դաստիարակներ:

Ոչ ոք չի արգելում: Ու... չի զարմանում: Չէ՞ որ կան մարդիկ, որոնք պատրաստ են տարվելու, հրապուրվելու նույնիսկ մի դատարկ բանով՝ ապացուցելու համար, որ իրենք սեփական կարծիք ունեն, սեփական խելք ու սեփական... ճաշակ: Ու հենց այս «նրբանկատ» ճաշակով էլ ջոկվում, տարբերվում են մյուսներից: Ինձանից, քեզանից, բոլորի՛ց: Ճշմարտությունը, սակայն, մեկն է:

Այդ սերիալները բանի նման չեն ու շատ են հեռու արվեստի գործ կոչվելուց: Ասեմ՝ ինչու՞: Իսկական արվեստը պիտի ծառայի ժողովրդին: Իսկ սրանք ծառայում են առանձին մարդկանց (գուցե առանձին խմբերի, ընկերությունների): Հիմքեր կան այսպես մտածելու: Ու սա՝ միայն իմ կարծիքը չէ: Շատերն են այսպես դատում՝ բեմի, թատերական գործի ճանաչված դեմքեր, մեր արվեստի ճակատագրով մտահոգ վարպետներ:

«Հիմա ես երբեմն նայում եմ մեր սերիալներն ու մտածում. էս կապիկությունները, որ անում են, ինչի՞ համար են, որ ի՞նչ սովորեցնեն: Էս բռնությունները ինչու՞ են ցույց տալիս... Իմ տարիքի բարձրությունից ես իրավունք ունեմ դիմելու՝ զգաստացե՛ք, այսպես չի կարելի...

Այն, ինչ քարոզվում է հեռուստատեսությամբ, այլեւս հանդուրժել չի կարելի. պետք է դադարեցնել: Արվեստը պետք է ծառայի ժողովրդին, այլապես դառնում է անիմաստ, դատարկ խրխնջոց...»,-մի առիթով ասել է մեծն հայը՝ Սոս Սարգսյանը:

Սրանից պարզ, հստակ, խիստ ու դիպուկ ասել, թվում է, չի լինի: Հետեւություն. մենք ազգովի պետք է մտածենք ու համապատասխան կառույցներից պահանջենք՝ էկրանը մաքրել հոգի պղտորող այդ տեսաղբից, էկրան հանել ազգի, վաղվա մեր քաղաքացիների կրթության ու դաստիարակության խնդրին հետամուտ արվեստի բարձրարժեք գործեր:

Միքայել ԲԱԼՅԱՆ
Թոշակառու ուսուցիչ

Հարգելի ընթերցող, տեղեկացնում ենք, որ ամառային արձակուրդի պատճառով թերթի հաջորդ համարը լույս կընծայվի սեպտեմբերի 17-ին:

«Ապառաժ» երկշաբաթաթերթ
Ստեփանակերտ, Կնունյանց 17,
հեռ.97 38 43, E-mail: aparajtert@gmail.com
Կայքէջ՝ www.aparaj.am

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաեւ նյութեր, որոնցում արծարծված տեսակետները չի կիսում:
Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻԶԱԿ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ում:
Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 1000: Գինը՝ 100 դրամ:

Խմբագրական խորհուրդ